1938—1939 ուս. տարում կոնսերվատորիան ու շնորհալի երեխաների խումբը միասին ունեին 40 դասատու, իսկ այժմ կոնսերվատորիայում աշխատում են 94 դասախոսներ, այդ թվում՝ 7 պրոֆեսոր, 25 դոցենտ, արվեստագիտության մեկ դոկտոր և 14 թեկնածու։ Այդ 94 դասախոսներից 54-ը Կոնսերվատորիայի նախկին սաներ են։

Իր գոյության 37 տարիների ընթացքում Երևանի պետական կոնսերվատորիայում ուսանել ու ավարտել է 713 մարդ։

1934 թվականից մինչև 1960 թվականը մեր Կոնսերվատորիան ավարտել են 588 մարդ, որոնցից՝

Դաշնամուրային ֆակուլտետը	161	մարդ
Օրկեստրային ֆակուլտետի լարային բաժինը	140	»
Օրկեստրային ֆակուլտետի փողային բաժինը	54	»
Մեներգեցողության ֆակուլտետը	77	»
Խմբավարական ֆակուլտետը	42	»
Դիրիժորական ֆակուլտետը	15	»
Երաժշտագիտական ֆակուլտետը	59	»
Կոմպոզիտորական ֆակուլտետը	37	»
Մանկավարժական ֆակուլտետը	3	»

Այժմ մեր ռեսպուբլիկայի քաղաքներից ավելի երաժշտական ուսումնական հաստատությունների ղեկավար կազմն ու դասատուները հիմնականում Կոնսերվատորիայի շրջանավարտներն են։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի, Երաժշտական կոմեդիայի թատրոնի, Հայֆիլհարմոնիայի մեներգիչները, մենակատարները, դիրիժորները, խմբավարները, երգչախմբերի ու սիմֆոնիկ նվագախմբերի արտիստները և ղեկավար կազմը նույնպես հիմնականում կոմպլեկտավորվում են Կոնսերվատորիայի շրջանավարտներից։ Կոնսերվատորիայի շրջանավարտներից շատերը աշխատում են նաև Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում։

Կոնսերվատորիայի նախկին սաներից ու շրջանավարտներից Ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչման են արժանացել հետևյալ հինգ արվեստագետները՝ կոմպոզիտորներ Աշոտ Սաթյանը, Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, ժողովրդական արտիստներ՝ Թաթուլ Ալթունյանը և Ավագ Պետրոսյանը։ Միջազգային, համամիութենական և Անդրկովկասյան մրցանակաբաշխությունների ու ֆեստիվալների լաուրեատի կոչման են արժանացել մոտ 20 կատարողներ ու կոմպոզիտորներ։

Կոնսերվատորիայի շրջանավարտներից են՝ կոմպոզիտորներ Ա. Խուդոյանը, Է. Հովհաննիսյանը, Գ. Չթչյանը, Ս. Ջրբաշյանը, Ա. Մերանգուլյանը, Է. Բաղդասարյանը, Գ. Արմենյանը, երաժշտագետներ՝ Ռ. Աթայանը, Մ. Մուրադյանը, Մ. Հարությունյանը, Ա. Բարսամյանը և շատ ուրիշներ։ Ներկայումս Կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնում են ուսանում և 1961 թ. ավարտելու են կոմպոզիտորներ Ջիվան Տեր-Թադևոսյանը և Կոնստանդին Օրբելյանը, որոնք իրենց ստեղծագործություններով արդեն գրավել են Սովետական Միության երաժշտական հասարակայնության ուշադրությունը։

Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի նվաճումները զգալի չափով պայմանավորված են ռուսական առաջավոր երաժշտական կուլտուրայի բարերար ազդեցությամբ և Մոսկվայի ու Լենինգրադի կոնսերվատորիաների անմիջական օգնությամբ, որոնց հետ սերտ կապ է պահպանվում։ Կապեր են հաստատված նաև Թբիլիսիի, Բաքվի և Կիևի պետական կոնսերվատորիաների հետ։

Կ. ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

1920 թ. դեկտեմբերի 17-ին, Հայաստանում Սովետական իշխանության հաստատվելուց ընդամենը 18 օր հետո, Երևանում բացվեց Ժողովրդական (հետագայում Պետական) համալսարանը։ Նրա առաջին ռեկտոր նշանակվեց ականավոր հայագետ, բազմավաստակ պատմաբան Հակոբ Մանանդյանը։

Կարճ ժամանակից հետո համալսարանում կազմակերպվեցին մի շարք ֆակուլտետներ, որոնց թվում և բժշկական ֆակուլտետը, որը բացվեց 1922 թ. մարտի 15-ին։ Նրա առաջին դեկան նշանակվեց բժ. Սպանդարատ Կամսարականը։ Ֆակուլտետի հիմնադրման գործում մեծ վաստակ ունեն նաև Հայաստանի առողջա-

պահության ժողկոմ Սիմոն Լազարևը, ժողկոմի տեղակալ Հայկ Չալլաթյանը, ակադեմիկոս բժիշկներ Վահան Աբծրունին, Գրիգոր Արեշյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Լևոն Հովհաննիսյանը, Արշակ Հակոբյանը, Արգար Բսահակյանը, Փայլակ Հակոբյանը, Եղիշե Շեկ-Հովսեփյանը և ուրիշներ։

Մեծ դժվարություն էր ներկայացնում ուսումնական պրոցեսի կազմակերպման գործը։ Դասախոսություններ և ուսանողների հետ գործնական պարապմունքներ տանելու համար չկային բիչ թե շատ հարմար լսարաններ, չկային լաբորատորիաներ, անատոմիկումի հատուկ շենք, կաբինետներ՝ իրենց ուսումնական սարքավորումներով և ցուցագրական նյութերով։ Ֆակուլտետը չուներ կլինիկական բազա։

Բժշկական ֆակուլտետի հիմնադիրներից պրոֆ. Վահան Աբծրունին, որ միաժամանակ հանդիսանում էր անատոմիայի ամբիոնի կազմակերպիչը և հիմնադիրը, վերհիշելով իր առաջին պարապմունքները բժշկական ֆակուլտետում գրել է. «Համալսարանի բակում գտնվում էր նախկին հիվանդանոցի լվացքատունը՝ մի բանի ցածրիկ սենյակներ, նրանց կից ձախ թևին ախոռն ու կառապանի սենյակը, որի կորին դրված էր դեզը, իսկ ախոռատան առջև բարձրանում էր ձիերի աղբակույտը՝ ծածկված ձյունով։ Լվացքատան սենյակներից մեկը վերածվեց լսարանի, իսկ երկուսը հատակագրին հերձարանի, նրանցից մեկը ծառայում էր և՛ իբրև հերձարան, և՛ իբրև դիականոց, այնպես որ մենք պետք է աշխատեինք անտանելի գարշահոտության, մթության և խոնավության մեջ։ Դոներն ունեին լայն ճեղքեր, լուսամուտները ցարդված էին, տանիքը երկու տեղից ծակ էր, որտեղից երևում էր երկինքը։ Համալսարանի հին շենքի ստորին հարկում մի ագոռ ու մութ սենյակ կար, մեջը դրված մի բանի աշակերտական թեր սեղաններ և մի փոքրիկ գրատախտակ։ Այդ սենյակում սկսեցի կարդալ առաջին դասախոսությունս. ուսանողներից մեկը մի նավթի լամպ ճարեց, որի ապակին ցարդված էր ու ծխում էր։ Լամպը դնելու սեղան չկար և ուսանողներից մեկը բռնել էր այն իր ձեռքին»[1]։

Ուշադրավ են նաև նորաստեղծ բժշկական ֆակուլտետի առաջին շրջանավարտ, հետագայում հիգիենայի ամբիոնի ասիստենտ-դասախոս, Հայկական ՍՍՀ առողջապահության նախկին ժողկոմ բժիշկ Բաբգեն Ասատվածատրյանի հուշերը ֆակուլտետի հնարավորությունների և իրենց պարապմունքների մասին։ «Ֆակուլտետը,— գրում էր նա,— տեղավորվել էր Պետական համալսարանի բակում գտնվող մի փոքրիկ տնակում, որն առաջներում եղել էր սեմինարիայի բաղնիքը և այդ ժամանակ մի կերպ հարմարեցված էր իբրև լսարան... Կահավորություն չկար, հյուսվածաբանական ամբիոնը, որը այժմ ունի բավարար սրահ, տասնյակներով մանրադիտակներ և այլ սարքավորում, 1922—23 թթ. ուներ միայն մեկ փոքրիկ սենյակ՝ 8—10 քմ. տարածությամբ և բնդամենը մեկ մանրադիտակ, և պարապմունքների ժամանակ մյուս ամբիոններից փոխ էր առնում ևս 1—2 հատ։ Պրեպարատները նայելու համար երկար հերթի էինք կանգնում...»[1]։

Դասախոսի և նրա առաջին ունկնդիր ուսանողի նկարագրած պայմանների հետ հաշվելով, բժշկական ֆակուլտետը սկսում է իր պարապմունքները։ Համալսարանի բակում գտնվող նախկին բաղնիքի և լվացքատան խոնավ շենքերում կազմակերպվում ու գործում են բժշկական ֆակուլտետի անատոմիայի, ֆիզիոլոգիայի, հյուսվածաբանության, պաթոլոգիական անատոմիայի, միկրոբիոլոգիայի, պաթոլոգիական ֆիզիոլոգիայի, բիոքիմիայի և լատիներեն լեզվի ամբիոնները։ Երևանի Կուլտուրայի տանը ֆակուլտետի համար առանձնացված էր մեկ սենյակ, որտեղ իր պարապմունքներն էր անցկացնում ֆարմակոլոգիայի ամբիոնը։

Բժշկական ֆակուլտետի գործունեության առաջին տարիներին մորֆոլոգիական և պրոֆիլային այլ դիսցիպլիններից բացի, կադրերի բացակայության և պարապմունքների համար լսարաններ ու հարմարություններ չունենալու պատճառով, օրգանական և անօրգանական քիմիան, ֆիզիկան, կենսաբանությունը, կենդանաբանությունը և հասարակագիտական առարկաները բժշկական ֆակուլտետի ուսանողները ունկնդրում էին մյուս ֆակուլտետների ուսանողների հետ միասին, ընդհանուր լսարաններում։

Դժվարությունները շատ էին, բայց դրանց հաղթահարելու համար կային իրենց ուժերի վրա վստահ հայրենասեր մասավորագետներ, ձեռնհաս մասնագետ բժիշկներ, որոնք գրկարաց դիմավորեցին Սովետական իշխանությունը և խանդավառությամբ համակված ձեռնամուխ եղան հարազատ ժողովրդի նոր կյանքի ու կուլ-

[1] «Հոկտեմբեր - Նոյեմբեր» տարեգիրք, Երևան, 1932, էջ 434—435։

[1] Բ. Ասատվածատրյան, Էջեր Բժշկական ինստիտուտի հիմնադրման և զարգացման պատմությունից, «Առողջապահության ֆրոնտում», Երևան, 1935, № 1—3, էջ 13։

տուրական շինարարության գործին։ Դժվարությունները հաղթահարելու համար դասախոսներն ու ուսանողները համակված էին լավատեսությամբ և հաղթահարում էին դրանք ձեռ-ձեռքի տված։ Դասախոսները ոգևորում էին ուսանողներին ապագայի վառ հեռանկարներով։ Պրոֆեսոր Վ. Արծրունին իր առաջին դասախոսության մեջ խոսքն ուղղելով ուսանողներին ասել է. «Երևանում ունենք բժշկական ֆակուլտետ, ուր գիտություն ավանդվելու է մայրենի լեզվով, և ես անչափ ուրախ եմ և հպարտ, որ ինձ վիճակվեց կարդալ առաջին դասախոսությունը։ Սիրելի ուսանողներ, սիրեցեք գիտությունը, հարգեցեք ձեր ուսուցիչներին, սրբությամբ պահպանեցեք մեր սիրած գործը, համարձակ ընթացեք առաջ դեպի ձեր վառ ապագան...»

Մեր Երկրի զարգացման հետ զուգընթաց, բժշկական ֆակուլտետը հաստատակամ քայլերով ընթանում էր առաջ։ 1923—1925 ակադեմիական տարիների ընթացքում Երևան քաղաքի առաջին և երկրորդ հիվանդանոցների բազայի վրա կազմակերպվեցին և կադրերով կոմպլեկտավորվեցին կլինիկական ամբիոնները։ Այդ նույն ժամանակաշրջանում հիմնվեց ներքին հիվանդությունների պրոտոդետիկայի (դիագնոստիկայի) ամբիոնը, որը մինչև այսօր ղեկավարում է բժիշկ, հետագայում բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Սովետական Միության բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը։

Բժշկական ֆակուլտետի կազմակերպման վաղ շրջանում նոր ամբիոններ հիմնելու համար սովետական տարբեր քաղաքներից Երևան հրավիրվեցին մի շարք մասնագետներ։ Այսպես, Ռոստովից հրավիրվեց դոցենտ, բժշկական գիտությունների դոկտոր Համբարձում Քեչեկը, որը հիմնեց և ընդհուպ մինչև 1940 թ. ղեկավարում էր ընդհանուր վիրաբուժության ամբիոնը։ Այս ամբիոնի հիմնադրումից հետո վիրաբուժական կադրերի պատրաստման գործը ֆակուլտետում սկսեց ընդլայնվել, կազմակերպվեցին վիրաբուժական նոր ամբիոններ։ Բժիշկ Գրիգոր Միրզա-Ավագյանի նախաձեռնությամբ հիմնվեց տոպոգրաֆիկ անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնը, բժիշկ Դասպար Մելքոնյանի նախաձեռնությամբ՝ հոսպիտալ վիրաբուժության ամբիոնը։

1925 թ. Խարկովից հրավիրված բժիշկ Արտաշես Մելիք-Ադամյանը հիմնում է ֆակուլտետային թերապիայի ամբիոնը, իսկ բժիշկ Անդրեաս Արզումանյանը մեկ տարի անց կազմակերպում է ներվային հիվանդությունների և հոգեբուժության ամբիոնը։

Հայտնի է, թե ինչպես Սովետական իշխանության հիմնադրման առաջին իսկ օրերին պարտիան և կառավարությունը ժողովուրդների պատմության մեջ առաջին անգամ մոր և մանկան իրավական պաշտպանության ու առողջա-

Ինստիտուտի ուսումնական գլխավոր շենքը

տության ավանդվելու է մայրենի լեզվով, և ես անչափ ուրախ եմ և հպարտ, որ ինձ վիճակվեց կարդալ առաջին դասախոսությունը։ Սիրելի ուսանողներ, սիրեցեք գիտությունը, հարգեցեք ձեր ուսուցիչներին, սրբությամբ պահպանեցեք մեր սիրած գործը, համարձակ ընթացեք առաջ դեպի ձեր վառ ապագան...»

Մեր Երկրի զարգացման հետ զուգընթաց, բժշկական ֆակուլտետը հաստատակամ քայլերով ընթանում էր առաջ։ 1923—1925 ակադեմիական տարիների ընթացքում Երևան քաղաքի առաջին և երկրորդ հիվանդանոցների բազայի վրա կազմակերպվեցին և կադրերով կոմպլեկտավորվեցին կլինիկական ամբիոնները։ Այդ նույն ժամանակաշրջանում հիմնվեց ներքին հիվանդությունների պրոտոդետիկայի (դիագնոստիկայի) ամբիոնը, որը մինչև այսօր ղեկավարում է բժիշկ, հետագայում բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Սովետա-

---

[1] Վահան Արծրունի. Ոսկրաբանություն, Երևան, 1922, Երևանի համալսարանի ապակետիպ, Առաջարան։

պահության գործը վերցրին իրենց ձեռքը, դարձնելով այն պետության հոգատարության առարկա և այդ նպատակին հատկացնելով հսկայական չափերի հասնող և շարունակ աճող միջոցներ։ Այդ նույն նպատակով բժիշկ Գրիգոր Արեշյանի ղեկավարությամբ 1924—1925 ակադեմիական տարում հիմնվում է մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոն և կլինիկա։

1926—1927 ակադեմիական տարում Բաքվից հրավիրվում է հմուտ մանկաբույժ Հովնան Գաբրիելյանը, որը կազմակերպում է ֆակուլտետի մանկական հիվանդությունների ամբիոնը ու կլինիկան, որտեղ պատրաստվում են բարձրորակ մանկաբույժներ։

Բացի վերը նշած ամբիոններից, 20-ական թվականներին համալսարանի բժշկական ֆակուլտետում հիմնվում են ինֆեկցիոն հիվանդությունների, աչքի հիվանդությունների, քիթ-կանջ-կոկորդի հիվանդությունների և ընդհանուր հիգիենայի ամբիոնները։

Բժշկական ֆակուլտետի կազմակերպիչները հանդիսանում էին մեր բժշկական մտքի նախասովետական շրջանի ներկայացուցիչները, որոնք, սակայն, մեծ մասամբ մինչ այդ գործում էին Հայաստանից հեռու ընկած մեծ քաղաքներում, որպես սովորական բժիշկներ։ Նրանցից միայն Հ. Քեչեկը ուներ գիտության դոկտորի աստիճան, պրիվատ-դոցենտի կոչում և դասախոսական աշխատանքի փորձ։

20-ական թվականներին համախմբվելով հայրենի հողի վրա գործող ու բարգավաճող Պետական համալսարանի շուրջը և համալսարանի բժշկական ֆակուլտետը դարձնելով ժողովրդական առողջապահության ֆրոնտի համար կադրերի պատրաստման դարբնոց, վերոհիշյալ բժիշկները միաժամանակ ձեռք բերեցին հմտություն, աճեցին, դարձան ճանաչված գիտնականներ ոչ միայն մեր ռեսպուբլիկայում, այլև ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։ Երբ ժողովրդին ծառայելու եռանդով համալսարան եկավ Լևոն Հովհաննիսյանը, նա մի շարքային բժիշկ էր, բայց իր բացառիկ եռանդի գործադրման համար հող գտնելով, աճեց ու դարձավ բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ապա և Սովետական Միության Բժշկական գիտությունների և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, բազմաթիվ հանրածանոթ գիտական աշխատությունների հեղինակ։

Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում և Հայաստանի ժողովրդական առողջապահության ֆրոնտում կատարած աշխատանքների մեջ շարունակ առաջադիմելով, 20-ական թվականների դասախոսները հետագայում աճեցին ու դարձան բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ, իսկ նրանցից շատերը իրենց նվիրված աշխատանքի ու մեծ ծառայությունների համար Սովետական կառավարության կողմից ստացան գիտության վաստակավոր գործիչների կոչում։ Հիշենք, նմանապես, որ նշած ժամանակաշրջանում հանդես են գալիս բժշկագիտության սովետական բարձրագույն դպրոցներն ավարտած շնորհալի կադրեր, որոնք հետզհետե խտացնում են դասախոսական կազմի շարքերը, նպաստում բժշկական ֆակուլտետի, ինչպես և սովետական բժշկագիտության զարգացման գործին։ 1927 թ. Երևանում աշխատանքի հրավիրվեց ընդամենը երեք տարի առաջ Բաքվի բժշկական ինստիտուտն ավարտած երիտասարդ բժիշկ Բարթուղիմեոս Ֆանարջյանը, որը մինչ այդ համառ կերպով ուսումնասիրել էր ռենտգենոլոգիայի գործը և առաջինը հիմնեց Երևանի բժշկական ֆակուլտետի ռենտգենոլոգիայի ամբիոնը, որի ղեկավարն է նա մինչև օրս։ Այդ ժամանակ նա անծանոթ դեմք էր նույնիսկ մեր փոքրիկ ռեսպուբլիկայում, բայց կարճ ժամանակամիջոցում աճեց ու դարձավ բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Սովետական Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։ Նրա գրչին են պատկանում ռենտգենոլոգիայի վերաբերյալ մի շարք մենագրություններ, որոնք թարգմանվել են բազմաթիվ լեզուներով։ Նույնը կարելի է ասել նաև պրոֆեսորներ Ռ. Յոլյանի, Ա. Ալեքսանյանի և շատ ուրիշների մասին, որոնց գիտական և բժշկական գործունեության հռչակը տարածվել է մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։

20-ական թվականներին բժշկական միտքը Հայաստանում իր ջանքերի զգալի մասը կենտրոնացնում է մայրենի լեզվով դասագրքեր ստեղծելու և հրատարակելու վրա։ Դասագրքեր ստեղծելու համար ամենից առաջ անհրաժեշտ էր ստեղծել բժշկական մասնագիտական տերմինների բառարաններ։ 1924 թ. պրոֆ. Վահան Արծրունին հրատարակում է 10 000 մասնագիտական բժշկական տերմիններ պարունակող «Ռուս-լատին-հայերեն բառարան»։ Հետագայում նա հարստացնում է այդ բառարանը և հասցնում մինչև 15 000 բառ-տերմինների։ Այդ բնագավառում զգալի ներդրում պետք է համարել 1952 թ. լույս տեսած ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի, ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանի և բժիշկ Աշոտ Տեր-Պողոսյանի կազմած «Լատին-ռուս-հայերեն» բժշկական հարուստ բառարանը։

1922—1924 թվականների ընթացքում Վ. Արծրունին մայրենի լեզվով գրում է անատոմիայի՝ օսկրաբանության, մկանաբանության և ընդերաբանության վերաբերող երեք պրակ դասագիրք։ 1934 թ. նա հրատարակում է «Շարժումների մեխանիզմի գիտական հիմունքները» անատոմիական աշխատություններ, իսկ նրա ասիստենտ (այժմ ամբիոնի վարիչ) դոց. Հակոբ Հակոբյանը դասագիրք մարդու անոթաբանության և ներվաբանության մասին։

Ներկայումս մեր ուսանողությունը ապահովված է բարձրորակ դասագրքերով։ Պրոֆ. Վ. Մ. Արծրունին հրատարակել է անատոմիայի դասագիրք, պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը՝ ներքին հիվանդությունների դասագիրք, ինչպես նաև հայ բժշկագիտության պատմության 5-հատորյակը, պրոֆ. Ռ. Ն. Յոլյանը՝ ֆակուլտետային վիրաբուժության դասագիրք, պրոֆ. Բ. Ա. Ֆանարջյանը՝ ռենտգենոլոգիայի դասագիրք, պրոֆ. Ս. Ս. Շահրիմանյանը՝ ընդհանուր վիրաբուժության դասագիրք, պրոֆ. Ա. Բ. Ալեքսանյանը՝ էպիդեմիոլոգիայի դասագիրք, պրոֆ. Լ. Ս. Հարությունյանը՝ հիգիենայի դասագիրք, պրոֆ. Ք. Ն. Փիրումյանը և Շ. Մ. Մաթևոսյանը՝ մալարիայի դասագիրք։ Հրատարակվել են նաև մեր մասնագետների թարգմանած մի շարք այլ դասագրքեր։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ոչ մի միջոց չխնայեցին, որպեսզի տարեցտարի ընդարձակվեն ինստիտուտի կլինիկական, լաբորատոր հնարավորությունները, ստեղծվեն նորերը, որպեսզի բժշկական ֆակուլտետում բարձր մակարդակի վրա ընթանան ուսուցումը և գիտա-հետազոտական աշխատանքները։ Այսպես, օրինակ՝ 1924—1930 թթ. ընթացքում ընդարձակվում է I և II սաղարային հիվանդանոցների բազայի վրա կազմակերպված դիագնոստիկայի, ֆակուլտետային, հոսպիտալ-թերապևտիկ, ընդհանուր վիրաբուժության, ֆակուլտետային վիրաբուժության, հոսպիտալ վիրաբուժության, ինչպես նաև նյարդային, բիթ-ականջ-կոկորդի հիվանդությունների ամբիոնների կլինիկական բազան։ Այդ տարիներին ավարտվեց աչքի և մանկաբարձական-գինեկոլոգիական կլինիկաների նոր շենքերի կառուցումը։ 1927 թ. կառուցվեց ներկա անատոմիկումի շենքի մի մասը, իսկ 1929 թ. լրիվ ավարտվեց և շահագործման հանձնվեց անատոմիկումի 3 հարկանի հատուկ շենքը, որտեղ տեղավորվեցին բոլոր մորֆոլոգիական ամբիոնները։

1930 թ. Երևանի Պետական համալսարանից մի շարք ֆակուլտետների հետ մեկտեղ անջատվում է նաև բժշկական ֆակուլտետը, որը կազմակերպվում է որպես առանձին, ինքնուրույն ինստիտուտ։ Ինստիտուտի դիրեկտոր է նշանակվում պրոֆ. Հակոբ Հովհաննիսյանը։ Այնուհետև ինստիտուտը անցնում է Հայկական ՍՍՌ Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի իրավասության տակ։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության և գյուղատնտեսության բուռն վերելքը, քաղաքներում և գյուղերում զարգացող սոցիալիստական վերակառուցման աշխատանքները, ժողովրդի կուլտուր-կենցաղային աճող պահանջմունքները սպասարկելու, ինչպես նաև սովետական առողջապահության պրոֆիլակտիկ ուղղությունը զարգացնելու և առաջ մղելու համար անհրաժեշտ էին բարձրորակ սանիտարական բժիշկ-հիգիենիստներ։ Այդ նպատակով 1930—1931 ակադեմիական տարում բացվում է նաև սանիտարական-հիգիենիկ նոր ֆակուլտետ։ 1935—1938 թթ. ստեղծվեցին աշխատանքային հիգիենայի, սննդի հիգիենայի, էպիդեմիոլոգիայի և առողջապահության կազմակերպման ամբիոնները։

Տարեցտարի լայնանում են նաև ինստիտուտի ֆակուլտետների ու ամբիոնների ուսումնա-արտադրական բազաները։ 1937 թ. ավարտվում և շահագործման է հանձնվում սուր վարակիչ հիվանդությունների կլինիկայի հսկա շենքը։ Առաջանում են նոր լաբորատորիաներ և կաբինետներ, որոնք ապահովվում են անհրաժեշտ սարքավորումներով և նորագույն ապարատներով։

Այնուհետև սկսվում են Երևանի բժշկական ինստիտուտի կենտրոնական՝ 4 հարկանի շենքի շինարարական աշխատանքները, որը լրիվ ավարտվեց և շահագործման հանձնվեց 1960 թ.։ Կրանում տեղավորվել են բժշկագիտության բոլոր տեսական, բնագիտական, հասարակագիտական ամբիոնները և ինստիտուտի վարչատնտեսական ապարատը։

Ելնելով այն հանգամանքից, որ Երևանի բժշկական ինստիտուտը ընդունվում են Սովետական Միության տարբեր քաղաքներում ռուսական միջնակարգ դպրոցներ ավարտած երիտասարդներ, 1939 թ. ինստիտուտում բացվեց ռուսական բուժ-պրոֆիլակտիկ սեկտոր, որտեղ պարապմունքները տարվում են ռուսերեն լեզվով։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ինստիտուտի բազայի վրա բացվեցին նաև բժիշկների վերապատրաստման կուրսեր, որոնց վերակառուցումով 1958 թ. ինստիտուտին առընթեր կազմակերպվեց բժիշկների կատարելագործման ֆակուլտետ։ Ռեսպուբլիկան բարձրորակ մանկաբույժներով ապահովելու նպատակով, 1958 թ. հիմնվում է նաև մանկաբուժական ֆակուլտետը։

Այսպիսով, Երևանի պետական բժշկական ինստիտուտը ներկայումս ունի 6 ֆակուլտետներ՝ հայկական և ռուսական բուժական, հայկական և ռուսական մանկաբուժական, հայկական սանիտարական-հիգիենիկ և բժիշկների կատարելագործման ֆակուլտետ։

Ներկայումս ինստիտուտն ունի 49 ամբիոն, որտեղ աշխատում են բժշկական գիտությունների 24 դոկտոր-պրոֆեսոր, 57 դոցենտ, գիտությունների 65 թեկնածու, 48 ասիստենտ՝ առանց գիտական աստիճանի և 145 լաբորանտ։ Ինստիտուտում աշխատում են 4 ակադեմիկոս և 1 թղթակից-անդամ։ Ինստիտուտում սովորում են 1564 ուսանող, որոնցից 25-ը սփյուռքահայեր են։

Բժշկական ինստիտուտն ունի ուսանողական մեծ հանրակացարան, հոյակապ գրադարան, որի ֆոնդը բաղկացած է 158 202 մասնագիտական գրքերից և հանդեսներից։

Ինստիտուտի բյուջեն 1934 թ. կազմում էր ընդամենը 637 հազար ռուբլի։ Հսկայական չափերով աճելով, 1960 թ. այն հասել է 16 միլիոն 575 հազար ռուբլու։

Իր գոյության 38 տարիների ընթացքում ինստիտուտը պատրաստել է 4253 բարձրորակ բժիշկներ, որոնց ճնշող մեծամասնությունը աշխատանքի է նշանակված Հայաստանի շրջանների և քաղաքների բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկներում։ Ինստիտուտի սաներից շատերը մեծ հաջողությամբ աշխատում են նաև Սովետական Միության տարբեր ռեսպուբլիկաներում։

Ինստիտուտի շրջանավարտների քանակի աճը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1927—30 թթ.	136	շրջանավարտ
1931—35 »	275	»
1936—40 »	363	»
1941—45 »	699	»
1946—50 »	746	»
1951—55 »	738	»
1956—60 »	1404	»

Ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացման, բժշկագիտության զանազան ակտուալ պրոբլեմների ու հարցերի վերաբերյալ նրանց խոր գիտելիքներ տալու, կլինիկական և լաբորատոր աշխատանքների հետ ծանոթացնելու նպատակով, ինստիտուտի շատ ամբիոններին առընթեր կազմակերպված են և գործում են ուսանողական գիտական խմբակներ, որտեղ ուսանողները զբաղվում են գիտա-հետազոտական աշխատանքներով. դրանցից շատերը, իրենց լավ կատարած օրիգինալ աշխատանքի համար, ինստիտուտի դիրեկցիայի կողմից պարգևատրվել են։

Գիտական խմբակներում ուսանողների կատարած աշխատանքները հնարավորություն են տալիս մոտիկից ծանոթանալու նրանցից յուրաքանչյուրի ընդունակությունների, գիտական աշխատանքով զբաղվելու հակում ունենալու չափի հետ։ Դա օգնում է ամբիոններին՝ ասպիրանտական կադրերի հաջող ընտրության գործում։

Ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի ամենօրյա մանկավարժական գործունեությունից բացի, յուրաքանչյուր ամբիոն ունի գիտա-հետազոտական աշխատանքների ծրագիր, որի համաձայն յուրաքանչյուր պրոֆեսոր, դոցենտ և ասիստենտ զբաղվում է նաև գիտական ուսումնասիրություններով։ Ինստիտուտի գիտնականների որոնումները ուղղված են լուծելու մեր ռեսպուբլիկայի ժողովրդական առողջապահության առաջ ծառացած մի շարք ակտուալ պրոբլեմներ։

Երևանի պետական բժշկական ինստիտուտը իրավամբ համարվում է ռեսպուբլիկայում բժշկագիտության գլխավոր շտաբը։ Նրա գիտնականների կոլեկտիվը գիտա-հետազոտական մեծ աշխատանք է կատարել մեր երկրի հանքային բուժիչ ջրերի սանատորա-կուրորտային արժեքն ու պրոֆիլը որոշելու ուղղությամբ։ Այդ աշխատանքների արդյունքը այն եղավ, որ ներկայումս մենք ունենք որպես սիրտ-անոթային սիստեմի հիվանդությունների բուժավայր վաղուց միութենական հռչակ վայելող Արզնի առողջարանը։ Նույնը կարելի է ասել մեծ ապագա խոստացող, Կարլովի Վարիի և Ժելեզնավոդսկի տիպի հրաշալի Ջերմուկ առողջարանի մասին, որտեղ մեծ հաջողությամբ բժշկվում են լյարդի, լեղապարկի, ստամոքսաղիքային ուղիների և հոգային ապարատի խրոնիկական հիվանդությունները։ Մեր կուրորտոլոգների մանրազնին հետազոտությունների շնորհիվ, Դիլիջանը ճանաչված է որպես թոքախտով տառապող հիվանդներին ապաքինող առողջարան և այլն։

Բժշկական ինստիտուտի գիտնականների ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են երկրամասային պաթոլոգիայի, ներքին հիվանդությունների, վիրաբուժության և օրթոպեդիայի, ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, հեմատոլոգիայի և արյան փոխներարկման, էպիդեմիոլոգիայի, աշխատանքային, սննդի, կոմունալ հիգիենայի, մոր և մանկան պահպանության, կանանց, ներվային հիվանդությունների, հոգեբուժության, Հայաստանում բժշկագիտության զարգացման պատմության և այլ բնագավառներին։ Բնորոշ է, որ եթե 1922—1930 թթ. ինստիտուտի աշխատակիցները տպագրել են 123 աշխատություն, ապա 1956—1960 թթ. տպա-

Ինստիտուտի անատոմիկումի շենքը

դրված աշխատությունների թիվը եղել է 1270։ Ինստիտուտի դասախոսները պաշտպանել են բազմաթիվ դիսերտացիաներ, որոնց թիվը, օրինակ, 1956—1960 թթ. եղել է 67 (դրանցից 7-ը՝ դոկտորական և 60-ը՝ թեկնածուական)։ Պաշտպանված դիսերտացիոն աշխատանքները առանձին մենագրություններ են, որոնք նվիրված են բժշկագիտության տարբեր բնագավառների ակտուալ հարցերին։ Դրանց զգալի մասը լույս ներդրում է բժշկական գիտության մեջ։

Ինստիտուտի 20-ական թվականների սաներից շատերը իրենց քրտնաջան աշխատանքի շնորհիվ գիտականորեն աճեցին և, ձեռք բերելով դասախոսական աշխատանքի փորձ, սկսած 30-ական թվականներից զբաղեցնում են ինստիտուտի ամբիոնների վարիչների, դոցենտների և ասիստենտների պաշտոնները։ Ներկայումս ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի 90 %-ից ավելին իր նախկին սաներն են։ Դրանց շարքում գտնվում են այնպիսիները, որոնք ճանաչված գիտնականներ են ոչ միայն մեր ռեսպուբլիկայում, այլ նրա սահմաններից դուրս։ Այդպիսիք են՝ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Սիմոն Միրզոյանը և Արարատ Ալեքսանյանը, պրոֆեսորներ Լևոն Հարությունյանը, Հովհաննես Գեորգյանը, Արսեն Սիմոնյանը, Սեդրակ Շահրիմանյանը, Պարթև Մարդարյանը, Գարեգին Միրզոյանը, Վազգեն Սարուխանյանը, Վերգինե Միքայելյանը, Անդրանիկ Ճաղարյանը, Սուրեն Գալստյանը, Սուրեն Զոհրաբյանը, Վիգեն Մալխասյանը և ուրիշներ։

Այսպիսով, անցած տասնամյակների ընթացքում Երևանի բժշկական ինստիտուտը, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ դարձել է մեր երկրում բժշկական կադրերի պատրաստման խոշոր կենտրոններից մեկը և բժշկական գիտական մտքի կարևոր օջախ։ Այստեղ համախմբված գիտնականները ջանք չեն խնայում, որպեսզի Սովետական Հայաստանի աշխատավորության առողջապահության գործը գրվի էլ ավելի բարձր մակարդակի վրա։

Ա. ԿՈՌՅԱՆ